ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2014-7-1-Ա

ք. Երևան 03.12.2014թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2014 թվականի դեկտեմբերի 3-ի նիստում քննարկեց 2014 թվականի ապրիլի 11-ին արտոնագրային հավատարմատար Սարգիս Կնյազյանի կողմից ներկայացված՝ Բուրգեր Քինգ Քորփորեյշն (5505 Blue Lagoon Drive, Miami, Florida 33126, USA) ընկերության (այսուհետ՝ բողոքարկող) «BURGER KING» (հայտ №20101326_1) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
Հայտում նշված՝ մնացած ծառայությունների համար ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի եւ 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի եւ «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու եւ քննարկելու» կարգի 87-րդ մասի 2–րդ կետի «ա» ենթակետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, եւ դրանով մակնշվող ապրանքների եւ (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված «BURGER KING» ապրանքային նշանը չի կարող գրանցվել, քանի որ այն շփոթելու աստիճան նման է 43-րդ դասի ծառայությունների համար ավելի վաղ առաջնությամբ արդեն գրանցված «BURGER KING» («Վալլետտա» ՍՊԸ, Կապան, Բաղաբերդ թաղ.2ա, բն. 2, N 10531) ապրանքային նշանին:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի եւ 2-րդ մասի 1-ին

կետի «ա» ենթակետի եւ «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու եւ քննարկելու» կարգի 87-րդ մասի 2–րդ կետի «ա» ենթակետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին: Տվյալ դեպքում մերժված նշանը շփոթելու աստիճան նման է ավելի վաղ գրանցված «BURGER KING» («Վալլետտա» ՍՊԸ, Կապան, Բաղաբերդ թաղ.2ա, բն. 2, N 10531) ապրանքային նշանին:

Փորձաքննության բաժնի պետը պնդեց, որ բաժնի որոշումն իրավաչափ է և ներկայացված ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման:

Բողոքարկողը ներկայացրեց իր կարծիքը այն մասին, որ բողոքը կարելի է գրանցել, ինչը կնպաստի, որ հայտատուն կարողանա ներդրումներ անել Հայաստանում:

Համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Սարգիս Կնյազյանի կողմից ներկայացված՝ «BURGER KING» (հայտ №20101326_1) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ